

ք. Երևան

29.06.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Լիկվոր» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Մաթևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 18.02.2022թ. կնքված № ԳՀԱՊԶԲ-22-9/5-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելվածներ № 1-ի և № 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը՝ կազմում է 912 000 (ինը հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձևառաջ ելնելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ Խազմաբժշկական վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011144129

ՀՎՀՀ 02522157

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

«Լիկվոր» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, Քոչինյան 7/9

«Ինելկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2050022101151001

ՀՎՀՀ 01201697

գլխավոր տնօրեն

Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳԱՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

Գնման առարկայի						
Հ/հ	CPV անվանումը	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)
14	դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03	դիկլոֆենակ նատրիումի, լիդոկայինի հիդրոքլորիդ, diclofenac sodium, lidocaine hydrochloride	հատ	2000	456	912 000
				1000	1000	

ՎՃԱՐՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի						
Հ/հ	CPV կոդը	CPV անվանումը	անվանումը	ընդհանուր գին/դրամ/	վճարումը նախատեսվում է իրականացնել 2022թ., համապատասխան է եռամսյակների, այդ թվում՝	ընդհանուր եռամսյակ
14	33631310/518	դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03	դիկլոֆենակ նատրիումի, լիդոկայինի հիդրոքլորիդ, diclofenac sodium, lidocaine hydrochloride	912 000	456 000	912 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՆՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Լիկվոր» ՓԲԸ գլխավոր տնօրեն
Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ